Ցարգոյապատիւ և գերապայծառ տեառն Ստեփաննոսի Վարդապետի
և արբայ հօր խոնարհուրեամբ և սիրով ողջոյն

... Վասն հայր մաչոցին բազմաց յանձնեցաք զտանել և բերել. սակայն անհնարին եղև ի ձեռս բերել. զի այն զտանի յարևելս ի վանս և յանապատս, զոր ոչ տան արտաքս, նաև ի պատրիարգարանին թերևս զտանիցի. և զիարդ մարթ է անտի առնուլ զայն, և կամ տալ գրել։ Այժմ փոքր մի հանդարտեցաւ քաղաքս ի հրդեհէ...։ Դարձեալ աղմուկ անհնարին ի մէջ ազգիս եղև յարարից ահագին սահակ վարդապետին, զի ամենևին հակառակ եկաց Սարգիս վարդապետին, և յայս ամ ոչ երթալ նմա յատեան ելանել. և յետ լինելոյ իւր կաթողիկոս խօսեցաւ ընդ նմա խստութեամբ իբրև ընդ թշնամւոյ. ասէ, որպէս պատմեցին. կամի՞ս երթալ նստիլ յիզմիւրին։ Իսկ նա ասէ, կամք ձեր է։ Ասէ կաթողիկոսն. երթիցես յիզմիւրին. բայց տացես նախ զձեռագիր մի ինձ, զմիւս յակոբայ վարդապետին, և զերրորդն գրեսցես ի հօմ առ պապն, եթէ ես սարգիս վարդապետս անարգեմ և նզովեմ զլևոն և զպապն, որ այժմ կայ. ապա թէ ոչ չարձակեմ զքեզ անդր, զի մի միւսանգամ փախիցես ի ֆրանկստան։ Իսկ նորա խոժոռեալ ընդ բանս նորա, ոչինչ ետ պատասխանի. և ել մեկնեցաւ յերեսաց նորա ի պէշիկտաշ։ Եւ յակոբ վարդապետն լուռ ևեթ կայր ընդ բանս կաթողիկոսին։ Այն յակոբ վարդապետն արարեալ է զգիրք մի ընդդէմ բանից լուսահոգի աբբահօրն վասն երկուց տեսակաց հաղորդութեան, եթէ պարտ է հաղորդել զժողովուրդն յերկոցունց. և զայն տալոց է տալ ի չորեքշաբթի աւուր զատկին, որպէս ասեն բազումք։ Եւ սափրիչ յօհաննէսն ոչ դադարի ընդ համախոհից իւրոց պղտորել զմիտս բազմաց։...

յամի տեառն 1756 *ապրիլի* 13 — *Փառայ անպիտան և անարժան*
ի կոստանդինուպոլիս — *Հ. Իգնատիոս Վարդապետ Մխիթարեան*

ՃՁԹ.

Հայկական պահքի վերաբերեալ խնդրոյ մ'առթիւ գրուած է նամակս։

Վերապատուելի Տեառն Հ. Միքայել Վրդ.ին ողջոյն սիրոյ ի տէր

... Վասն չփոթութեան ուղղափառաց, որ յաղագս ուտման ձկան ծանիր. զի իրաւի սոյն այս սրբազան պապս կարի վրէժխնդիր է զի իւրաքանչիւր ազգ զիւր Աէսն պահեսցէ, և մի մտցեն ի Աէս Լատինացւոց. ուստի և վասն այսորիկ շարադրեաց զգիրք մի փոքր, իբր գիր առ համօրէն ազգս արևելցւոց որպէս առաքելոց Կաթուղիկեաց գիրն. յորում պատուիրէ իւրաքանչիւր ազգաց կալ ի Աէսն իւրեանց, հաստատելով և ցուցանելով զայն ի զանազան և ի բազում վճռոց հօմայ հայրապետաց. և ի սմին ասէ ևս ոչ է արժան հայոց ուտել զձուկն յաւուրս պահոց. այլ պարտին որպէս ազգն սովոր է պահել զպահսն ոչ ուտելով զձուկն, նոյնպէս և ուղղափառ եղեալքն ի նոյն ազգէն ոչ պարտին ուտել զձուկն. և իրաւի պարտաւորէ այս զխղճմտանս, որոց ունին զերկիւղն աստուծոյ։ Եւ այս գիրք այժմ տպի ի Հօմ...։

1756 *ի մայիսի* 6 — *Նուաստ ծառայ*
[*ի Վենետիկ* – Ս. Ղազար] — Ստեփաննոս Վրդպտ. Աբբայ Հայր

ՃՂ.

Մեսրովբ Քեահեայ Արքեպս.ի նամակները կը շարունակեն իրենց այնքան կարևորագոյն պարունակութիւնները։ Ի մէջ այլոց օգտակար խորհուրդներ կու տայ առ Մելգոնեան, Մխիթարեան աշխարհաբար բառգրքին մէջ նշանակելու համար քաղաք-